ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲԻ ԶԻԼՖԻՄՅԱՆ

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.05 (Քրեական իրավունք, քրեակատարողական իրավունք և կրիմինալոգիա) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԵՐԵՎԱՆ - 2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЗИЛФИМЯН ДАВИД АКОПОВИЧ

УГОЛОВНО-ПРАВОВАЯ И УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА ОСУЖДЕННЫХ БЫВШИХ СОТРУДНИКОВ ПРАВООХРАНИТЕЛЬНЫХ ОРГАНОВ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 - уголовное право, уголовно-исполнительное право и криминология

Ереван-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Հ. Մ. Խաչիկյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Լ. Զ. Թադևոսյան**

իրավ. գիտ. թեկնածու **Ա. Հ. Հովհաննիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ արդարադատության ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 14^{30}-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. նոյեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ.
քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոց. **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А.М. Хачикян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Л.З. Тадевосян**

кандидат юридических наук **А.Г. Оганнисян**

Ведущая организация: **Академия юстиции РА**

Защита состоится 28-ого декабря 2020 г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 17-ого ноября 2020 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հայաստանի պետահիրավական համակարգի զարգացման արդի շրջանն աչքի է ընկնում դրա նորմատիվ-իրավական հիմքերի արմատական բարեփոխումներով: Դրանք հետապնդում են հանցավորության դեմ պայքարի ուժեղացման, հանցավոր ենթամշակույթն արմատախիլ անելու նպատակներ, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում: Այս համատեքստում բարեփոխումները վերաբերում են նաև քրեական պատիժները կատարող հիմնարկներին ընդհանրապես և իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների պատիժը կատարող հիմնարկներին՝ մասնավորապես:

Արդի սոցիալ-քաղաքական իրավիճակում հանցավորության դեմ պայքարի ընդհանուր միջոցառումներից բացի՝ անհրաժեշտ է մշակել ժամանակակից մոտեցումներին ու միջազգային փորձին համապատասխան քրեական պատիժների կատարման կազմակերպահրավական հիմքեր: Այս համատեքստում հատուկ տեղ են զբաղեցնում իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց նկատմամբ նշանակված պատիժների կատարումը և դրա արդյունավետության բարձրացումը, որի կարևորությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

Հանցավորության, հանցավոր ենթամշակույթի դեմ մղվող պայքարի ուժեղացման պայմաններում շատ կարևոր է խուսափել նկատելի դարձած արտակարգ առաջարկություններից ու միջոցներից, ներառյալ քրեակատարողական ոլորտում: Բացի այդ, ոլորտում համաշխարհային փորձի մեթոդաբանական նշանակության պայմաններում, երբ եվրոպական երկրներում չկան իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների անջատ պահելու կարգ և հատուկ քրեակատարողական հիմնարկներ, հնարավոր են առաջարկներ՝ վերացնել դրանք մեր երկրում: Այս հարցը հնարավոր չէ լուծել միանգամից, ինքնաբերաբար, առանց հարցի զարգացման պատմական պայմանների ու փոփոխությունների իմացության, երկրի առանձնահատկությունների, հանցավոր ենթամշակույթի հետ անխզելի կապի:

Այս և մի շարք այլ գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձանց հիմնահարցերը պահանջում են հրատապ ու անհետաձգելի տեսական հետազոտություն, բնականաբար նաև՝ դրա հիմքով արվող գիտագործնական առաջարկություններ: Վերը բերված հիմնավորումները վկայում են, որ առկա են տեսական ու գործնական հիմքեր, որոնք արդիական ու հրատապ են դարձնում իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեահրավական և քրեակատարողական հիմնահարցերի ուսումնասիրությունը, դրա կատարելագործման հիմնավոր առաջարկների մշակումը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են համարվում իրավապահ մարմինների նախկին աշխա-

տակից ազատությունից զրկված դատապարտյալների պատժի կատարման և կրման կարգն ու պայմանները, քրեակատարողական նորմերն ու ինստիտուտները, դրանց տեսագործնական համալիր խնդիրները, ինչպես նաև դրանց կենսագործման վիճակն ու աստիճանը: Հետազոտվում են նաև իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձ» հասկացությունը, այդ անձի հարցն ազատազրկման դատապարտվածների դասակարգման, միմյանցից անջատ պահելու քրեակատարողական իրավունքի տեսության մոտեցումներում:

Հետազոտության օբյեկտ են իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց քրեաիրավական, կրիմինալոգիական, քրեակատարողական բնութագրերի տարրերը, դրանց դրսևորման հատկությունները, նրանց կողմից պատժի կրման և կատարման հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, այդ խմբի անձանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ ՔԿՀ) գործունեությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության տեսական նպատակն է՝ ուսումնասիրել իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալ անձի» հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության ու օրենսդրության մեջ (հասկացությունը, խմբի տեղը դատապարտյալների համախմբում, ազատազրկման վայրերում նրանց անջատ պահելու հիմքերը), դասակարգման այդ խմբի հանցավոր անձանց քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագիրը, այդ դատապարտյալների իրավական վիճակը և քրեակատարողական բնութագիրը:

Հետազոտության խնդիրները կառուցվել են ատենախոսության նպատակներին համապատասխան՝ ներառելով հետևյալ հարցերը.

1) վեր հանել իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձ» հասկացության իրավաբանական իմաստները և մշակել դրա քրեակատարողական հասկացությունը,

2) քննարկել իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալի հիմնահարցն ազատազրկման դատապարտվածների դասակարգման քրեակատարողական իրավունքի տեսության համատեքստում և որոշել դատապարտյալների այդ խմբի առանձնացման նշանակությունը,

3) վեր հանել քրեակատարողական քաղաքականության վրա ազդող գործոնների համալիրը և այդ համատեքստում պարզել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու օբյեկտիվ գործոնները,

4) հանցավոր անձի կրիմինալոգիական ուսմունքի համատեքստում քննարկել իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների անձի հիմնահարցը, ամփոփման միջոցով կառուցել նրա կրիմինալոգիական բնութագիրը և առանձնացնել դրա տարրերը,

5) ուսումնասիրել և վեր հանել իրավապահ մարմինների նախկին աշ-

խատակից ազատազրկման դատապարտվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրի առանձնահատկությունները,

6) վեր հանել իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների քրեաիրավական բնութագրի տարրերը,

7) պարզել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի իրավական վիճակի հիմնահարցերը քրեակատարողական իրավունքի ընդհանուր ուսմունքի և տեսության համատեքստերում,

8) ուսումնասիրել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի քրեակատարողական բնութագրի վերաբերյալ տեսական մոտեցումները, կառուցել դրա հետազոտության ուղղությունները,

9) իրականացնել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների կողմից ազատազրկման կրման պայմանների վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություն և ամփոփում,

10) իրականացնել նշված խմբի ազատազրկման դատապարտվածների նկատմամբ կարգապահական ներգործության և վերասոցիալականացման տվյալների հավաքագրում, վերլուծություն ու ամփոփում,

11) ուսումնասիրել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալական միջավայրն ազատազրկման վայրում, նրանց արտաքին կապերը, դրանց բնորոշ առանձնահատկությունները,

12) հետազոտել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների ՔԿՀ-ի վարչակազմի գործունեության հետ կապված հիմնահարցերը, վեր հանել դրա աշխատակիցների պատկերացումները քրեակատարողական քաղաքականության մի շարք այլ խնդիրների վերաբերյալ:

Թեմայի մշակվածության աստիճանը: Ատենախոսության թեմայի շրջանակը ներառում է հետազոտման երկու հիմնական խումբ՝ ա) իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձի» քրեակատարողական հասկացությունը, բ) այդ խմբի դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագրերը:

Առաջին խումբը կազմող խնդրի աշխարհագրական տիրույթ են միայն հետխորհրդային երկրները, որովհետև «իրավապահ մարմինների նախկին աշխատակից» ազատազրկման դատապարտված անձանց այլ անձանցից անջատ պահելու ինստիտուտը ժառանգվել է խորհրդային շրջանից: Արևմուտքում չկա այդպիսի իրավական ինստիտուտ:

Ընդ որում խորհրդային շրջանում գիտությունը նշված հարցերի հետազոտություններով աչքի չէր ընկնում: Դրան անդրադարձան միայն վերջին տասնամյակներում (Ս. Ալտուխով, Կ. Պրոխորով, Վ. Ֆեսունով): Ուսումնասիրությունը հաստատում է, որ «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձ» հասկացության քրեակատարողական իմաստը դեռևս չի արժանացել ամբողջական հետազոտության: Հեղինակներն առավելապես կանգ են առել այդ խմբի ազատազրկվածների

կրիմինալոգիական ու քրեաիրավական բնութագրերի հետազոտության վրա: Հետևաբար, անհրաժեշտ է կառուցել նոր հասկացություն՝ զուտ քրեակատարողական իրավունքի տեսության դիրքերից:

Իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձի» հասկացության հետ սերտորեն կապված է այդ անձանց այլ խմբերի ազատազրկման դատապարտվածներից անջատ պահելու օրենսդրական պահանջը, դրա գիտատեսական հիմնավորումները: Համակողմանի չեն ուսումնասիրված նաև իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի հասկացությունը, նրանց անջատ պահելու հիմքերը:

Հետազոտման առարկային վերաբերող երկրորդ խումբը կազմող խնդիրները՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագրերը, Հայաստանում չեն ուսումնասիրված: ՌԴ-ում կատարվել են մի շարք հետազոտություններ, որոնցում շոշափվում են իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց կամ նրանց որոշակի խմբերի կրիմինալոգիական, մասնակիորեն քրեակատարողական բնութագրերը (Վ. Բրայցևա, Դ. Սուխով, Կ. Պրոխորով և Ս. Ալտուխով, Վ. Ֆեսունով): Նշված հեղինակների հետազոտություններում առաջադրված իրավապահ առանձին ոլորտների (քննիչներ, պետավտոտեսուչներ, ոստիկանության աշխատողներ և այլն) հանցավոր անձանց նկարագրի տարրերի վերաբերյալ մշակումներն օգտագործելով, դրանք համադրելով՝ փորձ է արվում ստանալ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի բնութագրի առավել ամբողջական ու լրիվ տարրերի համակցությունը: Այդ տարրերի ամբողջությունն անհրաժեշտ է նախ՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից հանցավոր անձի նկարագիրը կառուցելու համար, իսկ այնուհետև՝ այդ տարրերին համապատասխան տվյալ խմբի մեջ ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց հետազոտման մեթոդիկայի և հարցումների կառուցման համար:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները: Աշխատանքում առաջին անգամ իրականացվել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեակատարողական և կրիմինալոգիական հատկանիշների համալիր հետազոտություն՝ ատենախոսության նպատակով կանխորոշված հետազոտական խնդիրների շրջանակում: Տրվել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի քրեակատարողական հասկացության բնորոշումը, վեր են հանվել այդ խմբի դատապարտյալների քրեակատարողական իրավական վիճակի առանձնահատկությունները, նրանց համար նախատեսված ՔԿՀ-ի գոյության սոցիոլոգիական և այլ հիմքերը, հավաքագրվել և սոցիալ-իրավական հետազոտության են ենթարկվել իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատա-

պարտյալների քրեական և քրեակատարողական բնութագրի հիմնական հատկանիշները: Ատենախոսական աշխատանքը թեմայի առարկայի իմաստով լրացնում է քրեակատարողական իրավունքի տեսության բացերը:

Ատենախոսական աշխատանքով **գիտական շրջանառության մեջ են դրվում և պաշտպանության ներկայացվում հետևյալ հիմնադրույթները.**

1. «Իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալ անձ» հասկացությունն ունի ձևական իմաստ: Ընդհանրապես դատապարտյալին բնորոշ հատկանիշներից բացի՝ այն օժտված է նաև լրացուցիչ, օրենքով սահմանված հատկանիշով. հանցանքի կատարման պահին կամ դրանից առաջ այդ դատապարտյալը եղել է օրենքով սահմանված կամ իրավապահ այլ մարմնի աշխատանքային կամ քաղաքացիական պայմանագրի հիմքով աշխատող (աշխատակից): «Իրավապահ մարմնում աշխատակցելու» ժամանակը (վաղեմությունը, տևողությունը), իրավական հիմքերը (աշխատանքային կամ քաղաքացիական պայմանագիր, աշխատող կամ աշխատակից), հանցանքի կատարման պահին աշխատակից լինել կամ չլինելը կարող են ունենալ քրեաիրավական և կրիմինալոգիական նշանակություն, սակայն չունեն իրավական նշանակություն՝ պատիժն անջատ կրելու քրեակատարողական սուբյեկտիվ իրավունքի համար, որովհետև դրա ծագման հիմքն աշխատակցելու փաստն է:

2. Իրավապահ մարմնի նախկին աշխատակիցները կամ նրան հավասարեցված անձինք ազատազրկման դատապարտվելու դեպքում ունեն իրենց պատիժն անջատ կրելու իրավունք, որին համապատասխանում է քրեակատարողական ծառայության պարտականությունը՝ ապահովել այդ իրավունքը: Օրենսդրական նման կարգավորման պայմաններում քրեակատարողական իրավունքում «իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալ անձը» կարող է ունենալ երկու կարգավիճակ՝ ընդհանուր և հատուկ: Ազատազրկման հետ կապված պատժի դատապարտվելիս նա վերածվում է հատուկ իրավական վիճակով դատապարտվածի և ունի այլ դատապարտյալներից պատիժն անջատ կրելու իրավունք:

3. Իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներին անջատ պահելն ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման և միմյանցից անջատ պահելու քրեակատարողական իրավական ինստիտուտի ենթաինստիտուտ է: Ազատազրկման դատապարտվածների դասակարգման իրավական ինստիտուտի համալիրության համատեքստում իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու պահանջը չունի քրեաիրավական ակունքներ: Այդ անձանց պատժի կրման քրեաիրավական կողմերը հաշվառվելու են իրենց համար առանձին ստեղծված ՔԿՀ-ի ներսում՝ այդ հիմնարկներ տարբեր տեսակների ու պայմանների կիրառմամբ (հետագա դասակարգում): Հետևաբար, այս խմբի դատապարտյալների ազատազրկումն անջատ կիրառելու քրեակատարողական օ-

ռենսդրական պահանջն ազատազրկման դատապարտվածների նախնական դասակարգման դրսևորում է:

4. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց ազատազրկման ձևով պատժի կատարման ընթացքում անջատ պահելու սոցիոլոգիական հիմքը ՔԿՀ-ներում առկա հանցավոր ենթամշակույթն ու բարքերն են, դրա իրավաբանորեն ձևակերպված չափանիշը՝ այս անձանց նախկինում զբաղեցրած պաշտոնը կամ կատարած աշխատանքի բնույթը: Այսպիսի եզրակացությունից բխում է, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ազատազրկման դատապարտվածների դասակարգման տեսական բովանդակությունը պետք է լրացվի հետևյալ հիմնադրույթով. **ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման նպատակ պետք է ճանաչել նաև այդ անձանց անվտանգության ապահովումը,** հետևաբար ազատազրկվածների դասակարգման մեթոդաբանությունը ոչ միայն պատժի կատարման ու կրման անհատականացման, այլ նաև ազատազրկման դատապարտվածների մի շարք անձնական և այլ բնույթի իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց է: Հետևաբար, անհրաժեշտ է կատարել տեսական վերաիմաստավորում և քրեակատարողական օրենսդրության սկզբունք ճանաչել դատապարտյալների անվտանգությունը և այդ մասով լրացնել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ) 5 հոդվածը: Դրան համապատասխան՝ անհրաժեշտ է նաև լրացում կատարել ՀՀ ՔԿՕ-ի 2 հոդվածի 1-ին մասում՝ ավելացնելով «ապահովել դատապարտյալի անվտանգությունը» ձևակերպումը, որով այն այլ խնդիրների հետ միասին կվերածվի ՀՀ քրեակատարողական օրենսդրության խնդրի:

5. Հայաստանում, որտեղ ընտանիքը հարաբերականորեն կայուն միավոր է, դրա որպես հակաքրեածին գործոնի օրինաչափությունը հարաբերական է: Հետևաբար ամուսնացածների քանակի գերակշռությունը և ամուսնալուծությունների շատ քիչ քանակը կապ չունեն հանցավորության պատճառների հետ: Հայաստանում հնարավոր է, որ ամուսնությունը և դրանից բխող սոցիալ-կենցաղային պայմանները որոշակիորեն դառնան քրեածին գործոն՝ «հանուն ընտանիքի» արդարացմամբ:

6. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների (դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող) հետ միասին պատիժ են կրում նաև զինծառայողները (պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայող կամ նախկին զինծառայող, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող): Համապատասխան աշխատանքային ոլորտներում կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել զինված ուժերի, ինչպես նաև ոստիկանության համակազմին: Ոլորտում անհրաժեշտ է իրականացնել կրթական ցենզերի, բարոյական, հոգևոր-հոգեբանա-

կան կերպարի ձևավորման, զինծառայողների նյութական դրության բարելավման հատուկ միջոցառումներ:

7. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների՝ նախկինում դատված լինելու ցուցանիշն էական է՝ 30 %: Այս խմբի դատապարտվածների կեսից ավելին (56,25 %) նախկին հանցագործությունը կատարել են 18-30 տարեկանում: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների հանցագործությունների տեսակների քանակական հարաբերակցության վերլուծությունից երևում է, որ այդ խմբից ազատազրկման դատապարտվածների կեսը կատարել է կյանքի և առողջության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցանքներ, ինչը մտահոգիչ է, հատկապես, եթե նկատի ունենանք, որ նրանցից նախկինում դատապարտվածների հանցագործությունների մեջ գերակշռում էին կյանքի ու առողջության, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված հանցանքները: Այս փաստն արդեն իսկ վկայում է հանցավորության կառուցվածքի կայուն միտում. նախկինում կատարած նույնաբնույթ հանցագործությունները վերարտադրվում են: Այս օրինաչափությունը հիմնավորում է, որ անհրաժեշտ է սահմանափակել կամ իսպառ արգելել նախկինում հանցագործություն կատարած անձանց ծառայության հնարավորությունները իրավապահ ոլորտում:

8. Ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց համար պատժի անջատ կրումը և՛ իրավունք է, և՛ պարտականություն: Այն արտոնություն չէ, որովհետև պատժի կրման մնացած բոլոր հարցերում նրանք օժտված են նույն իրավունքներով և կրում են նույն պարտականությունները, ենթարկվում են իրավունքների ու ազատությունների նույն չափով սահմանափակմանը, ինչ որ ազատազրկման դատապարտված մնացած անձինք: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված անձը չի կարող հրաժարվել իր այդ իրավունքից: Այս կապակցությամբ նպատակահարմար է ՀՀ ՔԿՕ-ում նախատեսել առանձին հոդված, որի կարգավորման առարկան կլինի դատապարտյալի անձնական անվտանգության իրավունքը:

9. ՔԿՀ-ի ներքին կանոնակարգի խախտումների մեծ քանակը և դրան հակառակ՝ խրախուսվածների փոքր թիվը հնարավոր չէ բացատրել միայն դատապարտյալների գործոնով, հատկապես, եթե նկատի ունենանք դատապարտյալների խմբային առանձնահատկությունը: Հիմնական հավանական պատճառը ՔԿՀ-ում վերասոցիալականացման դերի թերագնահատումն է, որը թերևս քրեակատարողական ողջ համակարգի գործելակերպի խնդիր է: Խախտումների բնույթը և մեծ քանակը հաստատում են օրենսդրության անկատարությունն ու ՔԿՀ-ի աշխատակազմի ոչ արդյունավետ աշխատանքը: Այս եզրակացությունը հաստատում են ՔԿՀ-ի ներքին կանոնակարգի նկատմամբ դատապարտյալների և աշխատակիցների վերաբերմունքի, դրա

բարելավման կապակցությամբ ուսումնասիրությունների արդյունքները: Կանոնակարգի նկատմամբ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների ընդհանուր դրական վերաբերմունքը, որն էականորեն տարբերվում է ընդհանրապես ազատազրկման դատապարտվածների համապատասխան ցուցանիշներից, հակասության մեջ է կարգապահական տույժերի և խրախուսանքի միջոցների կիրառման պրակտիկայի հետ: Այդ պրակտիկայի համադրումը ներքին կարգապահության կանոններից դատապարտյալների ու աշխատակիցների բավարարվածության տվյալների հետ՝ հաստատում են, որ վերջինում կան որոշակի խնդիրներ, որոնք պայմանավորված են ՔԿՀ-ի աշխատակիցների գործելակերպով, ընդհանրապես համակարգի կառավարման ոճով և այլ գործոններով: Առկա խնդիրներն առավելապես գտնվում են ՔԿՀ-ի աշխատակիցների, ՔԿ ծառայության գործելաոճի տիրույթում, քան դատապարտյալների շրջանում: Անհրաժեշտ է կարգապահական պատասխանատվության կիրառման հիմքերի իրավական կարգավորման որոշակիացում՝ նոր օրենսդրական նախաձեռնություններով: Որպես այդպիսին՝ առաջարկվում են հետևյալ օրենսդրական նորամուծությունները՝

ա) ընդարձակել դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցների ցանկը, նախատեսել համեմատաբար մեղմ պատասխանատվության միջոցներ՝ նախազգուշացում, որոշակի ժամկետով ՔԿՀ-ի կրպակից, հեռախոսակապից, տեսազանգից օգտվելու իրավունքներից զրկում, հերթական տեսակցության իրավունքից զրկում և այլն,

բ) իրականացնել կարգապահական պատասխանատվության կիրառման հիմքերի օրենսդրական կարգավորման որոշակիացում,

գ) տեսազանգից օգտվելու հնարավորության պարագայում նպատակահարմար է նախատեսել նաև բջջային հեռախոսից օգտվելը և դրա կարգը:

10. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալների սոցիալական միջավայրում, ի տարբերություն այլ ՔԿՀ-ի, խմբային բաժանում և հեղինակություններ գրեթե գոյություն չունեն, հանցավոր ենթամշակույթի բազմաթիվ նորմեր այս մասնագիտացված ՔԿՀ-ում գործում են մասամբ: Դրա պատճառը նշված խմբի դատապարտյալների սոցիալ-հոգեբանական, մասնագիտական և այլ առանձնահատկություններն են, մասամբ նաև ՔԿՀ-ի գործունեությունը, բայց այնուամենայնիվ, կրիմինալոգիական հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ «Վարդաշեն» ՔԿՀ-ում առկա են խմբերի ձևավորման խմորումներ, առաջ են գալիս հեղինակություններ և նկատվում է նրանց ազդեցության աճ: Նման և այլ անհանգստացնող երևույթների համար իրենց դերն ունեն վարչակազմի թերացումները: Դատապարտյալների սոցիալական միջավայրի առողջացման ու բարելավման ուղղությամբ վարչակազմը բավական անելիքներ ունի, հատկապես պահանջկոտության բարձրացման, կա-

նոնակարգի պահպանման բարելավման ուղղություններով:

Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներն աչքի են ընկնում նաև կոնֆլիկտայնության բավականին ցածր մակարդակով: Նրանք չեն գտնվում ահաբեկման, կողոպտման կամ մեկ այլ նվաստացնող վիճակում, որոնք համատարած են ընդհանուր ՔԿՀ-ներում:

Հետազոտության մեթոդաբանությունը և մեթոդները: Հավաստի և գիտականորեն հիմնավորված արդյունքներ ստանալու համար օգտագործվել են ճանաչողության համագիտական դիալեկտիկական մեթոդը, ուսումնասիրության ընդհանուր տրամաբանական հնարքները, մասնավոր գիտական մեթոդները՝ համեմատական-իրավական, պատմավերլուծական, համակարգակառուցվածքային, ձևական-տրամաբանական, կոնկրետ-սոցիոլոգիական, վիճակագրական, հետազոտվող նյութի դասակարգման և այլն:

Հետազոտության տեսական և նորմատիվ իրավական հիմքերը: Ուսումնասիրության իրականացման ընթացքում օգտագործվել են իրավունքի տեսության տեսական մշակումները, ճյուղային իրավական գիտությունների՝ քրեական իրավունքի, կրիմինալոգիայի, քրեակատարողական իրավունքի, հոգեբանության մասնագետների հիմնարար աշխատությունները:

Հետազոտության իրավական հիմքեր են քրեական և քրեակատարողական քաղաքականության չափանիշներ պարունակող միջազգային փաստաթղթերը, քրեական և քրեակատարողական օրենսդրությունը:

Հետազոտության էմպիրիկ հիմքերը: Ուսումնասիրության էմպիրիկ հիմքերն են վիճակագրական տվյալները, դատապարտյալների և ՔԿՀ-ների աշխատակիցների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումներն ու անկետավորումը, որոնք հեղինակի կողմից իրականացվել են 2019 թ. գարնանը «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի 100 դատապարտյալների և 30 աշխատակիցների շրջանում, և որոնց արդյունքները մշակվել և օգտագործվել են հետազոտության ընթացքում: Օգտագործվել են այլ հետազոտողների սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները: Աշխատանքի շարադրման ընթացքում օգտագործվել են նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարին նվիրված արտահերթ հրապարակային զեկույցի նյութերը (Երևան, 2019), Հայաստանի վիճակագրական տարեգրքի իրավական վիճակագրության նյութերը (Երևան, 2019), ՀՀ և ՌԴ քրեական պատիժները կատարող մարմինների պաշտոնական կայքէջերի վիճակագրական նյութերը, ինչպես նաև ՀՀ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թ. գործունեության հաշվետվությունը:

Ատենախոսական աշխատանքի արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել հետազոտության օբյեկտ համարվող ՀՀ օրենսդրության մշակ-

ման, այն կատարելագործելու, ինչպես նաև իրավապահ մարմինների ու համապատասխան ՔԿՀ-ի գործունեության բարելավման, հանցավորության կանխման ծրագրերի մշակման համար: Ուսումնասիրության որոշ եզրակացություններ ու առաջարկներ կարող են օգտագործվել իրավապահ մարմինների և քրեակատարողական ծառայության կադրային քաղաքականության իրականացման ոլորտում, իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում հանցավորության դեմ պայքարի գործում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել քրեական և քրեակատարողական իրավունքների, կրիմինալոգիայի հետազոտություններում, դրանց դասընթացների ծրագրերի, ուսումնական նյութերի պատրաստման, դասավանդման, ՔԿՀ-ների աշխատակիցների վերապատրաստման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտությունը կատարվել է ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ և իրականացվել է աշխատանքի քննարկումը, հաստատվել է ատենախոսության վերաբերյալ եզրակացությունը: Ատենախոսական հետազոտական արդյունքները հրատարկվել են հեղինակի 7 գիտական հոդվածներում: Հեղինակն ատենախոսությանը թեմայով գիտական զեկուցումներ է կարդացել քրեական իրավունքի ամբիոնի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների ու հայցորդների գիտաժողովներում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երեք գլխից, տասներկու ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ցանկից և հավելվածից:

Ատենախոսության 1-ին գլխի «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձի հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության ու օրենսդրության համակարգում» 1-ին ենթագլխում հեղինակը ներկայացրել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձի» հասկացության իրավաբանական իմաստները: Իմաստային բազմազանության մեջ կողմնորոշվելու համար հեղինակը որպես հարցի հետազոտման մեթոդաբանական ճիշտ ուղի ընտրել է ընդհանրապես իրավահարաբերությունների և հատկապես քրեակատարողական իրավահարաբերությունների տեսությունները: Այդ հիմքով վեր են հանվել իրավապահ մարմինների նախկին աշխատակցի անձի հատկանիշները, իսկ այնուհետև՝ իրավապահ մարմին և իրավապահ մարմնի աշխատող հասկացությունները: Այդ վերլուծությունների արդյունքում հեղինակը հանգել է մի շարք եզրահանգումների:

Ատենախոսության 1-ին գլխի 2-րդ ենթագլխում հեղինակը հետազոտել է իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալի հիմնահարցն ազատազրկվածների դասակարգման համատեքստում: Իրավապահպան մարմինների նախկին աշխատակից դատապարտվածների հիմնահարցի քննարկումն ազատազրկման դատապարտված անձանց դա-

սակարգման օրենսդրական դրույթների և այդ դասակարգման տեսական մոտեցումների (նպատակների, չափանիշների, նշանակության և այլն) համատեքստում հեղինակին հնարավորություն է տվել հիմնավորել, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներին անջատ պահելն ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման և միմյանցից անջատ պահելու քրեակատարողական իրավական ինստիտուտի ենթաինստիտուտ է, չունի քրեաիրավական ակունքներ:

Ատենախոսության 1-ին գլխի 3-րդ ենթագլխում հեղինակը համակողմանիորեն ներկայացրել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու օբյեկտիվ հասարակական գործոնները: Իրականացվել է որոշակի հետազոտական աշխատանք՝ մի քանի ուղղություններով. ի՞նչ է քրեակատարողական համակարգը, և որո՞նք են դրա հիմնական տարրերը, որո՞նք են քրեակատարողական համակարգի նկարագիրը և առանձին տարրերի առկայությունն այդ համակարգում պայմանավորող գործոնները, ո՞րն է այն գործոնը, որի ուժով կամ պատճառով ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակիցները պետք է իրենց պատիժը կրեն այլ ազատազրկման դատապարտվածներից անջատ: Դա հիմք է տվել հեղինակին եզրակացնելու, որ քրեակատարողական համակարգի կառուցվածքային տարրերն ունեն սոցիալական պայմանավորվածություն, դրանց գոյության հիմքում ընկած են որոշակի օբյեկտիվ գործոններ ու պատճառներ: Տեսության կողմից արդեն վեր հանված և վերլուծված գործոնների համադրումը հիմք է տալիս առաջ քաշելու այն թեզը, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու ինստիտուտի հիմքում ընկած սոցիոլոգիական պատճառը խորհրդային հասարակության մեջ ձևավորված և մինչ այժմ գոյատևող հանցավոր ենթամշակույթի առանձնահատկություններն են: Հեղինակը հարցի լուծման արմատական միջոց է համարում դատապարտյալների անվտանգությունը քրեակատարողական օրենսդրության խնդիր և սկզբունք ճանաչելը և այդ մասով ՀՀ ՔԿՕ-ի մեջ լրացումներ կատարելը:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտված անձի հիմնահարցը կրիմինալոգիական ուսմունքի համատեքստում» 1-ին ենթագլխում հեղինակը ներկայացրել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների անձի բնութագիրը և դրա տարրերը: Հանցավոր անձի հատկանիշների շրջանակի տեսական բազմազանությունը նկատի ունենալով՝ հեղինակը փորձել է ներկայացնել առանձին տեսաբանների մոտեցումներն այդ հարցում, այնուհետև լրացման կամ բացառման մեթոդներով կառուցել այդ հատկանիշների հիմնական խմբերը և դրանցից ամեն մեկի շրջանակում ընդգրկված հատկանիշները: ՀՀ-ում իրավապահ մարմինների նախկին աշխատակից հանցավոր անձանց բնութագրերի շար-

քից բացառվել են հանցագործության կատարումը հարբած վիճակում, սոցիալական գործառույթները և հանցագործության շարժառիթային կողմերը բնութագրող հատկանիշները: Այս խմբի դատապարտյալների հանցավոր անձի նկարագրի կամ կառուցվածքի տարրեր են դիտարկվել՝ ա) սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, բ) բարոյահոգեբանական հատկանիշները, գ) քրեաիրավական հատկանիշները, դ) քրեակատարողական հատկանիշները: Դրանք պարունակում են անհրաժեշտ և բավարար կրիմինալոգիական տեղեկույթ հանցագործություն կատարած անձի որակների ու հատկությունների մասին, ունեն գործնական նշանակություն, ինչպես այդ անձանց սոցիոլոգիական հետազոտության, այնպես էլ վերլուծության, կանխարգելիչ համալիր միջոցառումների մշակման համար:

Ատենախոսության 2-րդ գլխի 2-րդ ենթագլխում հեղինակը հետազոտել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը՝ հետազոտելով իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների սեռը, տարիքը, ընտանեկան դրությունը, կրթությունը, զբաղմունքի տեսակը կամ իրավապահ աշխատանքի ոլորտը, զբաղվածությունը հանցանք կատարելու պահին:

Ատենախոսության 2-րդ գլխի 3-րդ ենթագլխում հեղինակը հետազոտել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների քրեաիրավական բնութագիրը՝ կարևորելով իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալների հանցավոր անձի քրեաիրավական բնութագրի հետևյալ հատկանիշները՝ նախկինում դատապարտված լինելը, նախկինում ազատազրկում կրելու փաստը և ժամկետները, նախկինում կատարած հանցագործության տեսակները, առաջին անգամ դատապարտման տարիքը, ներկա դատապարտման հանցագործությունների տեսակները, հանցագործության կատարման ընթացքում կիրառված բռնության եղանակը, շահադիտական հանցագործության կատարման եղանակը, վերաբերմունքն իր կատարած հանցագործությանը, պատժին և այլն:

Ատենախոսության 3-րդ գլխի «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների իրավական վիճակի և անձի քրեակատարողական բնութագրի առանձնահատկությունները» 1-ին ենթագլխում քննարկելով իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալի իրավական վիճակի հիմնահարցն անհատի իրավական կարգավիճակի ընդհանուր տեսության և քրեակատարողական իրավունքում դատապարտյալների իրավական վիճակի տեսության համատեքստում՝ հեղինակը կատարել է մի շարք կարևոր ամփոփումներ, որոնք արտացոլված են ատենախոսության եզրակացության և պաշտպանության ներկայացվող դրույթներում: Միաժամանակ նա առաջարկում է

ՀՀ ՔԿՕ-ում նախատեսել առանձին հոդված **դատապարտյալի անձնական անվտանգության իրավունքը** վերտառությամբ:

Ատենախոսության 3-րդ գլխի 2-րդ ենթագլխում հեղինակը հետազոտել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի քրեակատարողական բնութագրի տարրերի վերաբերյալ տեսական մոտեցումները: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձի քրեակատարողական բնութագրի տարրերի (հատկանիշների) շրջանակի վերաբերյալ գիտնականների մոտեցումներում չկա միասնականություն: Հետազոտողներից յուրաքանչյուրն առաջարկում է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի բնութագրի՝ իր կողմից հիմնավորված առավել կարևոր հատկանիշների խումբը: Սակայն բոլոր մոտեցումներում նկատվում է որոշակի միասնականություն. գրեթե բոլորն այդ շրջանակի մեջ ներառում են դատապարտյալների վերասոցիալականացման երեք հիմնական միջոցները. վերաբերմունքը՝ աշխատանքին, քրեակատարողական հիմնարկում իրականացվող դաստիարակչական գործունեությանը, պատժի կրման կարգին և պայմաններին կամ կարգապահական վարքագծին՝ որպես դատապարտյալի վերասոցիալականացումը բնութագրող հիմնական գործոն:

Ատենախոսության 3-րդ գլխի 3-րդ ենթագլխում հեղինակը հետազոտել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների ազատազրկման կրման պայմանները: Պատժի կրման այդ պայմանների օրենքով ամրագրված համախմբերից հեղինակը հետազոտել և վեր է հանել որոշ, իր կարծիքով, առավել կարևոր տարրերի իրացվածության խնդիրը, դրանցից իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների և համապատասխանաբար ՔԿՀ-ի աշխատակիցների բավարարվածության աստիճանը: Խոսքը մասնավորապես գնում է դատապարտյալներին հատկացված բնակելի տարածքի, դատապարտյալի սննդի և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու, դատապարտյալի հանդերձանքի, դատապարտյալների բժշկական սպասարկման, քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների համար կազմակերպվող մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումների, ինչպես նաև ժամանցային պայմանների մասին: Այդ համեմատական ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն են տվել կառուցելու հետաքրքիր տեսագործնական ամփոփումներ, որոնք արտացոլված են ատենախոսության եզրակացություններում և պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Ատենախոսության 3-րդ գլխի 4-րդ ենթագլխում հետազոտվել են կարգապահական ներգործության և վերասոցիալականացման հիմնահարցերն իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների նկատմամբ: Ավանդաբար այս խմբի (կամ դրա որոշ են-

թախմբերի) դատապարտյալների քրեակատարողական բնութագիրն ուսումնասիրող հետազոտողներն առանձնացնում են այս բնագավառի հիմնական ցուցիչը՝ կարգապահական խախտումների բացակայությունը՝ որպես վերասոցիալականացման հիմնավոր փաստ: Վերասոցիալականացումը դիտարկվում է իբրև քրեակատարողական համակարգի կարևորագույն գործառույթ, որից կախված են քրեակատարողական իրավունքի բազմաթիվ ինստիտուտների գործողությունը և ընթացքը: Վերասոցիալականացման աստիճանի հաշվարկումը կատարվում է խրախուսանքի և տույժի միջոցների կիրառման ցուցանիշների հիման վրա: Ատենախոսը մի փոքր ընդարձակել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալների քրեակատարողական այս բնութագրի հետազոտման շրջանակները՝ դրա մեջ առաջին հերթին ներառելով կարգապահական տույժի և խրախուսանքի միջոցների կիրառման պրակտիկան: Միաժամանակ փորձել է վեր հանել դատապարտյալների վերաբերմունքը բուն ներքին կանոնակարգին, դրանից բավարարվածությունը, ինչպես նաև այն փոխելու ցանկալի ուղղությունները, ընդ որում որոշ դեպքերում նաև ըստ ՔԿՀ-ի աշխատակազմի տեսակետի: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալների ՔԿՀ-ի կարգապահական ներգործության միջոցների կիրառման պրակտիկայի և ներքին կանոնակարգի տարբեր կողմերի վերաբերյալ տեսակետների ուսումնասիրությունը հնարավորություն է տվել կատարելու կարևոր տեսագործնական եզրակացություններ:

Ատենախոսության 3-րդ գլխի 5-րդ ենթագլխում հետազոտված են իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների արտաքին սոցիալական կապերը և միջավայրն ազատազրկման վայրերում: Ազատազրկման դատապարտվածների սոցիալական կապերը՝ պայմանավորված ազատազրկում պատժատեսակի բնույթով, կարող են լինել երկու տեսակ՝ ա) սոցիալական կապեր քրեակատարողական հիմնարկում, այսինքն՝ անմիջական միջավայրում, բ) սոցիալական կապեր ՔԿՀ-ից դուրս: Ատենախոսը հետազոտության առարկայի շրջանակում չի ներառել ազատազրկման վայրերի, ներառյալ իրավապահ մարմնինների նախկին աշխատակից անձանց սոցիալական միջավայրի տեսական հիմնահարցերը, այլ փորձել է վեր հանել իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալների սոցիալական միջավայրի որոշ առանձնահատկություններ՝ իր կողմից կազմակերպված կրիմինասոցիոլոգիական հետազոտության միջոցով՝ այդ ընթացքում հատկապես ուշադրություն դարձնելով ազատազրկման դատապարտվածների ներխմբային և միջխմբային հարաբերություններին: Դա հնարավորություն է տվել վեր հանելու ազատազրկման դատապարտված այս խմբի անձանց օրենքով սահմանված մի շարք իրավունքների կենսագործելիության աստիճանը, մշակելու դրանց բա-

ռելավման ուղղությամբ անհրաժեշտ ու համալիր միջոցառումներ:

Ատենախոսության 3-րդ գլխի 6-րդ ենթագլխում վեր են հանվել քրեակատարողական քաղաքականության որոշ առումների վերաբերյալ ՔԿՀ-ի աշխատակիցների պատկերացումներն ու գնահատականները, ինչպես նաև ՔԿՀ-ի վարչակազմի գործունեության գնահատականը պատիժը կրող դատապարտյալների տեսանկյունից, ՔԿՀ-ի աշխատակիցների կրթական, մասնագիտական որակների որոշ կողմեր: Այդ հետազոտական խնդրի ուսումնասիրությունը հիմք է տվել կառուցելու մի շարք կարևոր տեսագործնական եզրակացություններ:

Եզրակացությունում ներկայացված են կարևոր ընդհանրացումները:

1. «Իրավապահ մարմիններ» հասկացության բացահայտման համար կարևոր հանգամանք է հանցավորության դեմ պայքարի գործառույթը: Քրեակատարողական իրավունքի տեսանկյունից այդպիսին են այն մարմինները, որոնք ունեն որոշակի գործառութային դերակատարություն հանցավորության դեմ պայքարի ողջ գործընթացում՝ սկսած օպերատիվ հետախուզական գործունեության, այնուհետև՝ քրեական հետապնդման հարուցման սկզբից մինչև նշանակված քրեական պատժի կատարումը: Այս չափանիշով ղեկավարվելով՝ իրավապահ մարմինների շրջանակի մեջ պետք է ներառվեն դատարանը, ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, քննչական մարմինները (գերատեսչական և ընդհանուր), դատախազությունը, դատական ակտերի հարկադիր կատարման մարմինները, քրեակատարողական մարմիններն ու հիմնարկները: Այս շրջանակին պետք է ավելացնել նաև ՀՀ ՔԿՕ-ի 68 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում սահմանված մնացած անձանց, այսինքն՝ մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայող կամ նախկին զինծառայող, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալները: Այս հիմնահարցի հետ է կապված մեկ այլ կարևոր խնդիր: Մեր կարծիքով՝ վերը թվարկված դատապարտյալ անձանց անջատ պահելու հետ միասին ՔԿՀ-ում անջատ պահվելու իրավունք ունեն նաև նրանց ընտանիքի անդամները: Այս մոտեցման համար հիմք են ծառայում նույն այն գործոնները, որոնց ուժով անջատ պետք է պահվեն լայն իմաստով իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալները:

2. Իրավապահ մարմնի նախկին աշխատակիցները կամ նրանց հավասարեցված անձինք ազատազրկման հետ կապված պատժի դատապարտվելիս վերածվում են հատուկ իրավական վիճակով դատապարտյալների և ունեն այլ դատապարտյալներից պատիժն անջատ կրելու իրավունք: Այդ սուբյեկտիվ իրավունքի ծագման հիմքը «իրավապահ մարմնում աշխատակցելու» փաստն է՝ անկախ դրա իրավական հիմքից, ժամանակի և տեղի հանգամանքներից: «Իրավապահ մարմնում աշխատակցելու»

ժամանակը (վաղեմությունը, տևողությունը), իրավական հիմքերը (աշխատանքային կամ քաղաքացիական պայմանագիր, աշխատող կամ աշխատակից), հանցանքի կատարման պահին աշխատակից լինել կամ չլինելը կարող են ունենալ միայն քրեաիրավական և կրիմինալոգիական նշանակություն:

3. Ազատազրկման հետ կապված պատիժների դատապարտվածների նախնական դասակարգումը ոչ միայն պատժի կատարման անհատականացման միջոց է, այլ նաև անվտանգության ապահովման նպատակի ապահովման իրավական երաշխիք: Այս մոտեցումների տեսական ընկալումը լուծում է ենթադրյալ հայեցակարգային հակասությունն ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակների ու դասակարգման չափանիշների մի մասի միջև, որովհետև ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների դասակարգման խմբի առանձնացումը կապվում է դասակարգման նոր և յուրահատուկ նպատակի հետ, այն է՝ ազատազրկման դատապարտվածների կյանքին ու առողջությանը, այլ իրավունքներին սպառնացող վտանգների կանխումը: Այս հիմնահարցի լուծումը դատապարտյալների անվտանգությունը քրեակատարողական օրենսդրության սկզբունք և համապատասխանաբար օրենսդրության խնդիր ճանաչելն է, ինչպես նաև դատապարտյալի անձնական անվտանգության իրավունքի օրենսդրական ամրագրումը:

4. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից պատիժը կրող դատապարտյալների տարիքային տվյալները վկայում են, որ հանցավորության կանխման միջոցառումներ մշակելիս հատկապես պետք է ուշադրություն դարձնել իրավապահ մարմինների՝ 25-40 տարեկան աշխատակիցներին: Այդ տարիքն աչքի է ընկնում սոցիալ-գույքային կայացման տեսանկյունից. տարիքային այս խմբի ենթադրյալ ներկայացուցիչը դեռևս չի հասել որոշակի նյութական բավարարվածություն ապահովող պաշտոնների ու դրան հետևող աշխատավարձերի: Հավանաբար ցածր աշխատավարձերն այս տարիքային խմբում քրեածին գործոնի դեր են խաղում:

5. ՀՀ-ում իրավապահ մարմինների աշխատակից դատապարտյալների թվում գերակշռում են բարձրագույն կրթությամբ անձինք: Սակայն այստեղ չկա հատուկ քրեածին պատճառ: Տարբերությունը պայմանավորված է բնակչության խտությամբ, բարձրագույն կրթություն ստացողների բարձր թվով, օրենսդրությամբ ոլորտում աշխատանքի անցնելու համար բարձրագույն կրթության պահանջի սահմանմամբ: Սակայն դա չի նշանակում, որ կանխարգելման առումով անելիքներ չկան: Անհրաժեշտ է բարձրացնել մասնագիտական էթիկայի դերն ու կշիռը բարձրագույն կրթության համակարգում:

6. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների թվում մեծ թիվ են կազմում զինծառայողները: Համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելիս հատուկ ու-

շադրություն պետք է դարձնել զինված ուժերի, ինչպես նաև ոստիկանության համակազմին: Ոլորտում անհրաժեշտ է իրականացնել կրթական ցեղերի, բարոյական, հոգևոր-հոգեբանական կերպարի ձևավորման, զինծառայողների նյութական դրության բարելավման հատուկ միջոցառումներ:

7. Իրավապահ մարմինների համակարգում հանցավորության ցուցանիշները և՛ ծառայողական, և՛ քաղաքացիական աշխատանքի կարգավիճակում գտնվող դատապարտյալների թվով գրեթե հավասար են: Այստեղից բխում է, որ բարելավման և կանխարգելիչ միջոցառումների կարիք ունեն ոչ միայն իրավապահ մարմինների ծառայողական, այլ նաև քաղաքացիական աշխատողների համակազմերը: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալների՝ մինչև հանցանք կատարելը զբաղվածության 100 % ցուցանիշը հաստատում է, որ աշխատանքը՝ որպես հակաքրեածին գործոն, կարծես թե չի կատարում իր դերը: Հավանական պատճառներից է իրավապահ մարմինների աշխատակիցների՝ իրենց աշխատանքից անբավարարվածությունը, աշխատանքը և զբաղվածությունը չարժևորելը:

8. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների հանցավորության կառուցվածքում բռնության եղանակով կատարված հանցանքները կազմում են մոտ 70 % և հիմնականում ոչ մասնագիտական-աշխատանքային ոլորտի արարքներ են: Այս տարօրինակության պատճառը մասնագիտական ոլորտի հանցանքներին (հատկապես շահադիտական) բնորոշ հատուկ լատենտայնությունն ու թաքցնելն է: Այս եզրակացությունը հաստատվում է նաև այն փաստերով, որ շահադիտական հանցագործությունների կատարման եղանակների մեջ բացակայում են յուրացումը, չարաշահումը, վատնումը, իսկ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների հանցագործությունների միայն 1/3-ն է շահադիտական:

9. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտված անձանց բնակելի տարածքի քանակական և որակական կողմերի հետազոտությունը հիմք է տալիս ընդհանուր համատեքստում այն գնահատել դրական: Սակայն այս ուղղությամբ ՔԿՀ-ում անելիքներ կան, որովհետև բնակելի տարածքն անբավարար գնահատելու պատճառների շարքում և՛ դատապարտյալները, և՛ աշխատակիցները նշել են անհարմարավետությունը, հիգիենայի անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև լուսավորությունը, տարածքների մակերեսը (նեղվածքը):

10. Դատապարտյալների սննդի ապահովման հարցի ուսումնասիրությունը հաստատում է, որ տասնամյակի կտրվածքով ՔԿՀ-ներում տարվել է որոշակի աշխատանք սննդից բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: Դրական փոփոխությունն արձանագրելով՝ պետք է նկատի ունենալ, որ ներկա պահին ամբողջությամբ բավարարված են միայն դատա-

պարտյալների մոտ կեսը, իսկ դա պահանջում է որոշ միջոցառումներ բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: Դրանցից մեկը կարող է լինել դատապարտյալի կողմից սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու հարաբերությունների որոշակի ազատականացումը: Նկատի ունենալով ազատականացման դեմ և կողմ կարծիքները՝ նպատակահարմար է ոչ թե ընդհանրապես վերացնել սահմանափակումներն ու արգելքները, այլ ավելացնել մեկ ամսվա ընթացքում ծախսվող գումարի քանակը:

11. Հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկում հագուստից և դրա կրման կանոններից դատապարտյալների գրեթե կեսի դժգոհությունը, հատկապես աշխատակիցների մեծամասնության տեսակետը, համապատասխան կանոնները փոփոխելու անհրաժեշտության, տրամադրվող հագուստի որակի բարելավման, դրա ձևն ու գույնը ավելի բարետես դարձնելու առաջարկությունը՝ նպատակահարմար է նախաձեռնել հագուստի կանոնների բարեփոխում՝ համապատասխան լրացումներ ու փոփոխություններ կատարելով քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգում:

12. Դատապարտյալների ժամանցային ոլորտում առկա են էական խնդիրներ ու բացթողումներ: Ժամանցի պայմաններից անբավարարության հիմնական պատճառներ են գրադարանից օգտվելու հնարավորության սահմանափակումը, թերթերի, ամսագրերի և այլ գրականության բացակայությունը, մշակութային, լուսավորչական միջոցառումների սակավությունը, սպորտային պարագաների բացակայությունը և հնացած լինելը: Ժամանցի կազմակերպման վիճակի վատթար լինելը մեծամասամբ պայմանավորված է ընդհանուր հասարակական խնդիրներով, սակայն դա չի նշանակում, որ պետք է անգործ նստել: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել բարելավում ապահովելու համար:

13. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատությունից զրկված դատապարտյալները, հայտնվելով ՔԿՀ-ում, առավել ծանր են ապրում ազատության կորուստը, իսկ ընդհանրապես ազատազրկման դատապարտվածների վրա առավել բացասական են ազդում գույքակացարանային պայմանները: Տարբերության պատճառը թերևս իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների կրթական ավելի բարձր մակարդակն է, ինչպես նաև «Վարդաշեն» ՔԿՀ-ի կացարանային (բնակության պայմանների) առավել բարվոք վիճակը:

14. ՔԿՀ-ում հեռախոսային խոսակցությունների, տեսազանգերի, տեսակցությունների քանակի և տևողության բոլոր սահմանափակումների վերացման առաջարկության նկատմամբ աշխատակիցների մոտեցումներն ավելի խելամիտ են, քանի որ այդ իրավունքների՝ առանց սահմանափակման իրացումը կարող է խաթարել ՔԿՀ-ի սոցիալական առաքելությունը: Սահմանափակումներն անհրաժեշտ են խելամտության սահմանում: Ազատազրկ-

ման դատապարտվածների տեսակցությունների իրավունքի իրացման աստիճանը չունի բարձր ինտենսիվություն: Տարեցտարի նկատվում է տեսակցությունների քանակի նվազման միտում: Հետազոտության տվյալները վկայում են, որ տեսակցությունների սահմանափակումների վերացման ենթադրյալ ցանկությունն ամբոխավարական է:

15. Քրեակատարողական համակարգում կադրային քաղաքականությունն օրենսդրական ու ենթաօրենսդրական կարգավորման և կիրառման մակարդակներում վերանայման կարիք ունի: Անհրաժեշտ է հրաժարվել ավանդական կարծրատիպերից և նոր իրավակարգավորումներով աշխատակիցների ընդհանուր թվում էականորեն ավելացնել հոգեբանների ու մանկավարժների քանակը:

16. Քրեակատարողական համակարգի և քրեակատարողական քաղաքականության բարեփոխումների առաջադրված ուղղություններից աշխատակիցների մեծ մասը նախընտրում է դատապարտյալների պայմանների խստացումը: Այդպիսի վերաբերմունքի պատճառներից են մասնագիտական կարծրատիպի՝ անցյալից փոխանցված ավանդույթները: Այլ նկատելի պատճառներ են վարչակազմի կողմից դատապարտյալների նկատմամբ պայմանների ընտրողաբար ազատականացումը և երկակի ստանդարտները, կիրառման խստագույն ոճի բացակայությունը: Տվյալները հաստատում են նաև, որ ՔԿՀ-ում առկա է իրական վիճակի օբյեկտիվ նկարագիրը թաքցնելու կամ ազատ տեսակետ արտահայտելու կաշկանդվածության միտում, ինչը հաստատում է, որ ՔԿՀ-ում առկա են օրինականության խստագույն պահանջի անտեսման միտումներ, ինչպես նաև թերացումներ՝ դատապարտյալների շրջանում խմբերի ձևավորման ու դրանց դեմ պայքարի կանխարգելիչ աշխատանքների կատարման ուղղությամբ:

17. ՔԿՀ-ի աշխատակիցներին անհանգստացնում է ՔԿՀ-ների գործունեության թափանցիկությունը: ՀԼՄ-ներում ոչ ճիշտ հրապարակման դեմ պայքարի ձևը չի կարելի դիտել տեղեկատվական ներփակվածությունը, քանի որ դա հակասում է տեղեկատվության ազատությանը ու բացախոսությանը: Խնդրի լուծումը ոչ ճիշտ հրապարակումների դեմ պայքարն է իրավական ձևերով, այլ ոչ թե փակ հիմնարկի վերածվելը:

18. Դատապարտյալների դիմում-բողոքների քննարկման ու լուծման ընթացքից առկա է ընդհանուր բավարարվածություն: Սակայն անհանգստացնող է այն փաստը, որ ՔԿՀ-ի վարչակազմին դիմող ամեն տասներորդ դատապարտյալն իր դիմում-բողոքի պատասխանը չի ստացել: Դատախազություն դիմում-բողոք ներկայացրած դատապարտյալների մեծ մասը բավարարված չէ դրանց լուծման ընթացքից: Այստեղ դիմում-բողոքներ ներկայացրած դատապարտյալների մի մասն իսկապես դժգոհության հիմքեր ունի, որովհետև այդ զանգվածը գոհ չէ ոչ թե մերժվելուց, այլ ձգձգելուց, չպատասխանելուց, անարդարությունից: Այս համատեքստում ՔԿՀ-ի վարչակազմի գործունեությունը հա-

մեմատաբար դրական է, սակայն այն ևս խնդիր ունի՝ բարելավել դիմում-բողոքների լուծման ընթացակարգը, հատկապես որ դատապարտյալները դժգոհ են ոչ թե մերժվելուց, այլ չպատասխանելուց:

19. Դատապարտյալների ու ՔԿՀ-ի վարչակազմի միջև հարաբերությունների վիճակը ընդհանուր առմամբ դրական է: Սակայն խորքային վերլուծության արդյունքները բերում են եզրակացության, որ ՔԿՀ-ի վարչակազմը դատապարտյալների նկատմամբ վերաբերմունքում ունի արդարության, իրավահավասարության, մարդկային վերաբերմունքի ապահովման խնդիրներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մի քանի հարցեր ցմահ ազատազրկման հիմնախնդրի շուրջ, «Մխիթար Գոշ» գիտական հոդվածների հանդես, թիվ 2(45), Երևան, 2016, էջեր 240-244:

2. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձի հասկացության իրավաբանական բազմիմաստությունը, «Պետություն և իրավունք», թիվ 2-3 (84-85), Երևան, 2019, էջեր 62-68:

3. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների հիմնահարցն ազատազրկման դատապարտվածների դասակարգման համատեքստում, «Պետություն և իրավունք», թիվ 1 (86), Երևան, 2020, էջեր 78-88:

4. Հանցավոր ենթամշակույթը որպես իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու օբյեկտիվ գործոն, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 117, Երևան, 2020, էջեր 19-26:

5. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների քրեաիրավական բնութագիրը, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 5-6 (251-252), Երևան, 2020, էջեր 57-66:

6. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի իրավական վիճակի հիմնահարցերը, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 118, Երևան, 2020, էջեր 35-42:

7. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների անձի բնութագիրը և դրա տարրերը, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», թիվ 1 պրակ Բ, Գյումրի, 2020, էջեր 105-115:

ДАВИД ЗИЛФИМЯН

УГОЛОВНО-ПРАВОВАЯ И УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА ОСУЖДЕННЫХ БЫВШИХ СОТРУДНИКОВ ПРАВООХРАНИТЕЛЬНЫХ ОРГАНОВ

РЕЗЮМЕ

В условиях усиления борьбы против преступности, в особенности коррупции и криминальной субкультуры а также, принимая во вниманию значение международного опыта в этой сфере, когда в европейских странах нет порядка раздельного содержания осужденных бывших сотрудников правоохранительных органов и специальных уголовно-исполнительных учреждений, звучат предложения об их упразднении и в нашей стране. Все это свидетельствует о том, что имеются теоретические и практические основания для всестороннего изучения уголовно-исполнительных проблем, касающихся этой категории осужденных.

Теоретической целью исследования является изучение проблем, касающихся «осужденного лица бывшего сотрудника правоохранительных органов» в системе теории и практики уголовно-исполнительного права (понятие, место этой группы в совокупности осужденных, основания для их отдельного содержания в местах лишения свободы), уголовно-правовой и криминологической характеристики преступных лиц этой группы, общего и специального правового положения и уголовно-исполнительной характеристики этих осужденных. Путем изучения этих теоретических вопросов диссертант преследует цель выработки соответствующих предложений.

Задачи исследования выстроены в соответствии с целями диссертации, в частности, сделана попытка изучить и решить следующие практико-теоретические правовые, криминологические и уголовно-исполнительные вопросы: понятие «осужденный бывший сотрудник правоохранительных органов», их место в классификации лиц лишенных свободы, теоретические подходы уголовно-исполнительного права относительно раздельного содержания, порядок и условия исполнения и несения наказания осужденных бывших сотрудников правоохранительных органов, уголовно-исполнительные нормы и институты, а также состояние и степень их претворения в жизнь.

Научная новизна диссертационного исследования приводит к тому, что в диссертации впервые осуществлено комплексное исследование уголовно-исполнительных и криминологических характеристик осужденных бывших сотрудников правоохранительных органов.

Диссертант дал характеристику уголовно-исполнительного понятия осужденного бывшего сотрудника правоохранительных органов. По мению автора, понятие «осужденное лицо бывший сотрудник правоохранительных

органов» имеет формальное значение. Кроме характерных для осужденного признаков, оно наделено также дополнительным, установленным законом признаком: в момент совершения преступления либо до этого осужденный был работником (сотрудником) или работником (сотрудником) иного органа на основании трудового или гражданского договора. Время «сотрудничества в правоохранительном органе» (срок давности, длительность), правовые основания (трудовой или гражданский договор, работник или сотрудник), являлся или не являлся сотрудником в момент совершения преступления могут иметь уголовно-правовое и криминологическое значение, но не имеют правового значения для уголовно-исполнительного субъективного права раздельного несения наказания, поскольку основанием его возникновения является факт сотрудничества.

Бывшие сотрудники правоохранительных органов или приравненные к ним лица в случае осуждения к лишению свободы имеют право раздельного несения своего наказания, которому соответствует обязанность уголовно-исполнительной службы по обеспечению этого права. В условиях подобного законодательного регулирования в уголовно-исполнительном праве «осужденное лицо бывший сотрудник правоохранительных органов» может иметь два статуса - общий и особый.

В диссертации раскрыты особенности правового положения осужденных из этой группы, социологические и иные основания наличия предусмотренных для них УИУ, собраны и подвергнуты социальному правовому исследованию основные признаки уголовной и уголовно-исполнительной характеристики лишенных свободы осужденных бывших сотрудников правоохранительных органов.

Результаты исследования могут быть использованы для разработки законодательства РА, а также улучшения деятельности правоохранительных органов и соответствующих УИУ, выработки программ по предотвращению преступности.

DAVIT ZILFIMYAN

CRIMINAL-LEGAL AND PENAL CHARACTERISTICS OF CONVICTED FORMER EMPLOYEES OF LAW ENFORCEMENT BODIES

SUMMARY

In the context of the strengthening of the fight against crime, in particular corruption and the criminal subculture, the methodological significance of international experience in this area, when in European countries there is no procedure for the separation of convicts, former employees of law enforcement agencies and special penal institutions, proposals are made to abolish them in our. These justifications indicate that there are theoretical and practical grounds that make it relevant and urgent to study the criminal-executive problems of convicted former law enforcement officers, scientific justifications for the execution of punishment.

The main theoretical goal is to study the problem of a “convicted person former law enforcement officer” in the system of theory and legislation of criminal executive law (the concept, the place of this group in the aggregate of convicts, the grounds for their separate detention in places of deprivation of liberty), criminal law and criminological characteristics of criminals of this group, general and special legal status and penal characteristics of these convicts. By studying these theoretical goals and their individual aspects, the speaker pursues the goal of developing proposals on criminal executive legislation relating to convicted former law enforcement officers deprived of their liberty, and improving the practice of its constructive application.

The objectives of the research are lined up in accordance with the objectives of the dissertation, in particular, an attempt was made to study and solve the following practical and theoretical legal, criminological and criminal-executive issues - the concept of "a convicted person is a former law enforcement officer", the question of this person in the classification of convicted prisoners, theoretical approaches of criminal executive law of separation, the procedure and conditions for the execution and punishment of convicts deprived of their liberty - former employees of law enforcement agencies, penal norms and institutions, their practical and theoretical complex tasks, as well as the state and degree of their implementation.

The scientific novelty of the dissertation research leads to the fact that for the first time in the dissertation, a comprehensive study of the penal and criminological signs of convicted former law enforcement officers is carried out, within the framework of research tasks predetermined for the purpose of the dissertation.

The author gave a description of the criminal-executive concept of a convict, a former law enforcement officer. The author argues that the concept of “convicted former law enforcement officer” has a formal meaning. In addition to the characteristics characteristic of a convicted person in general, it is also endowed with an additional feature established by law - at the time of the crime or before that, this convicted person was a legally established employee (employee) or employee (employee) of another body on the basis of an employment or civil contract. The time of "cooperation in a law enforcement body" (limitation period, duration), legal grounds (labor or civil contract, employee or employee), was or was not an employee at the time of the crime - may have criminal and criminological significance, but have no legal significance for the criminal executive subjective right to separate punishment, since, the basis for its occurrence is the fact of cooperation.

Former law enforcement officers or persons equated to them, in case of conviction to imprisonment, have the right to separate their punishment, which corresponds to the obligation of the penal service to ensure this right. In the context of such legislative regulation in the criminal executive law, a “convicted former law enforcement officer” can have two statuses - general and special. When convicted to a punishment associated with imprisonment, he turns into a convict with a special legal status and has the right to be punished separately from other convicts.

It can also be noted that the features of the legal status of convicts from this group, sociological and other grounds for the presence of penal institutions provided for them, have been revealed, and the main features of the criminal and criminal-executive characteristics of convicts deprived of their liberty have been collected and subjected to socio-legal research.

The dissertation work in the sense of the subject of the topic fills in the gaps in the theory of penal law.

The results of the research of the dissertation work can be used to develop the legislation of the Republic of Armenia, which is considered the object of research, to improve it, as well as to improve the activities of law enforcement agencies and relevant penitentiary institutions, and to develop programs to prevent crime.